Ինչրոյ կաթիլներ։

ԿՈՆՆԻՆԳԷՄ[1] անգղիացին կարմիր կոպիճի կարգին մէջ գտաւ անձրևի կաթիլներու նշաններ հին ժամանակէն տպաւորուած կակուղ կաւին վրայ, ու ետքը նոյն ձևով քարացած։ Կաթիլները խոշոր են կ'ըսէ, և վերէն խիստ ուժով ընկած. այնպէս որ ընկած տեղերնին կաթիլին մեծութեանը չափով խորցած են, ամէնն ալ կանոնաւոր կերպով, և իրարու նման։ Ասկէ կը հետևցընէ հեղինակը թէ աս կաւը շատ կակուղ եղած պիտի ըլլայ որ վրան կարենան տպաւորուիլ անձրևի կաթիլները. և թէ ան անձրևէն ետքը կամ երկայն ատեն ուրիշ անձրև եկած պիտի չըլլայ, կամ թէ հողը շուտ քարացած, որ տպաւորուած նշանները իրենց ձևին մէջ անարատ մնացեր են։

ՐՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ամփիոն։

Լուէ հին և թէ նոր ատենները աւելորդապաշտ մարդիկ զանազան այլանդակ կենդանիներ հնարեր են իրենց մտքովը. իրենք վախցեր են անոնցմէ, և ուրիշներն ալ վախցընելու համար՝ անձոռնի պատմութիւններով խաբխրբեր են զանոնք։ Այսպիսի այլանդակ կենդանիները Հայերէն ընդհանրապէս ՃԻՒՂ կ'ըսուին, և ռամիկը ՀՈՂԷԿ. ոմանք ամենևին չկան, ու շինծու կամ մտացածին են, ոմանք ալ թէպէտ և կը գտնուին, բայց անոնց վրայ պատմուած բաները ըստ մեծի մասին սուտ են։ Այս տեսակ կենդանեաց մէկ տեսակն ալ է Ամփիոն ըսուածը, որ խոշոր չղջիկ[2] մըն է. քարթին վրայ տերևի ձևով մորթ մը ունի. վրայի գոյնը մութ կարմիր է. լեզուն երկայն, ու լեզուին ծայրը երկայն բարակ ու պինդ մնի կտորուանք կան։ Ուրիշ չղջիկներուն պէս երկար ատեն առանց յոգնելու կը թռչի. բայց անոնցմէ աս տարբերութիւնս ունի որ գետնին երեսէն ալ կրնայ վազել։ Անութեամբ խիստ արիւնկլակ է. ուստի թէ որ յանկարծ հաւնոցի մը մէջ մտնէ, գետնին երեսէն աքիսի[1] ու աղուեսի[2] պէս վազելով կը յարձակի հաւերուն վրայ ու ամէնն ալ մէկիկ մէկիկ կը սպաննէ։

Այս մասնաւոր բնութիւնն ալ ունի վամփիռն որ կենդանեաց ու մարդկանց ալ քնացած ժամանակնին վրայ կը հասնի, ու արիւննին կը ծծէ։ Կ'ըսեն թէ հարաւային Ամերիկային մէջ երբոր տեսնէ թէ մարդ մը բաց տեղ պառկեր է, կը մօտենայ քովն ու կը սկսի չորս դին զգուշութեամբ թռչըտիլ, ու երկայն թևերովը բարակ քամի մը կը հանէ. մարդը անանուշ հովէն քնացածին պէս, խորամանկ վամփիռը կ'իջնայ վրան, ու առանց խածնելու՝ ան լեզուին ծայրի կարծր մսերովը մարդուն կաշին քիչ մը կը քերթէ ու արիւնը կը ծծէ։

Ասող կայ թէ քունին մէջ վամփիռին՝ ձեռքը ընկած մարդը մէյմըն ալ չարթընար. բայց աս բանս սուտ է. ինչպէս նաև ուրիշ շատ սուտ պատմութիւններ որ ասոր վրայ ու ասոր նման կենդանիներուն վրայ կը պատմուին։

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Կանէթ[3]։

Այս բոյն ալ վուշին պէս իր թելերուն համար կը մշակուի. վասն զի ասոր թելերէն կը շինեն չուաններ ու

1 Cunningham. 2 ԿԷՃԷ ԳՈՒՇՈ։

1 ԿԷԼԻՆՃԻ։ 2 ԹԻԼԻ։ 3 ԳԷՆԷՐ։